Государственное учреждение
“Бюро по реализации
градостроительных программ”
Министерства градостроительства
Республика Армения

State Agency “ Urban Development
Projects Implementation Unit”
at the Ministry of Urban Development
of the Republic of Armenia.

Հայաստանի Հանրապետության
Քաղաքաշինության նախարարության
«Քաղաքաշինական ծրագրերի իրականացման
գրասենյակ» պետական հիմնարկ

0010, ք. Երևան,Հանրապետության Հրապարակ
Կառավարական տուն 3,
0010, г. Ереван, пл. Республики, Дом Правительства 3,
Government House 3, Republic Square,
Tel.: 526550 Fax: 526550

27.10.16 N ԱՊՔ/1-334-16

<<Գնումների աջակցման կենտրոն>> ՊՈԱԿ-ի պետ
Պարոն Մ. Անանյանին

Հարգելի Պարոն Անանյան,

Ի պատասխան Ձեր 17.10.2016 թ.
01/04.2/3783-16 գրության՝

Կից Ձեզ ենք ներկայացնում <<ՔՆՔԾԻԳ-ԲՀՀԱՇՁԲ-16/6>> ծածկագրով գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի 25.09.2016 թ. նիստի արձանագրության պատճենը, որպես՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի կողմից 12.10.2016 թ. ընդունած թիվ 100/16 որոշման կատարման մասին տեղեկատվություն:

Հարգանքով՝

Տնօրենի պաշտոնակատար՝ Մ. Քյուրքչյան

Կատ. Իրավաբանական և գնումների
կազմակերպման բաժին
հեռ. 56-43-16

Արձանագրություն N 6
«ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԱՇՁԲ-16/6» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան

25.09.2016 թ.
ժ. 11:00

Մասնակցում էին.

Հանձնաժողովի նախագահ	Ա. Ջանջուղազյանը,
Հանձնաժողովի անդամներ	Ռ. Եղիազարյան /գնահատող/,
	Ռ. Խոջայանը /գնահատող/,
	Ֆ. Սարգսյանը /բացող/,
	Ա. Աշուղյանը /բացող/,
Հանձնաժողովի քարտուղար	Հ. Ավետիսյանը

1. Գնումների բողոքարկման խորհրդի 12.10.2016 թ. թիվ 100/16 որոշման քննարկման մասին

(Ա. Ջանջուղազյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ գնումների բողոքրկման խորհրդի 12.10.2016 թ. թիվ 100/16 որոշուման մասին գրությունը ՀՀ քաղաքաշինության նախարարության <<Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ>> պետական հիմնարկը ստացել է 20.10.2016 թ-ին.

1.2 Հիմք ընդունելով գնումների բողոքրկման խորհրդի 12.10.2016 թ. թիվ 100/16 որոշումը ինչպես նաև վերոհիշյալ որոշման կատարման իրավապարտադիր լինելու հանգամանքը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց.

- Դադարեցնել <<ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԱՇՁԲ-16/6>> ծածկագրով բանակցային ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 13.09.2016 թ. նիստի թիվ 5 արձանագրությամբ Մարտունու <<Նորոգշին>> ԲԲԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու, Մարտունու <<Նորոգշին>> ԲԲԸ-ի հետ պայմանագիր կնքելու և <<Կանժիլստրոյ>> ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին թիվ 3.1, 4.1 և 1.2 կետերով ընդունված որոշումները.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

2. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և հաջորդ տեղ զբաղեցրած մասնակցին ծանուցելու մասին

(Ա. Ջանջուղազյան)

2.1 Հիմք ընդունելով <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 168-Ն որոշմամբ հաստատված կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետը՝ գնման

ընթացակարգի հաջորդ տեղ զբաղեցրած մասնակցի <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող, հրավերով նախատեսված՝ որակավորման պահանջներին համապատասխանելու վերաբերյալ՝ 25.10.2016թ. հարցում ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

2.2 Հաջորդ տեղ զբաղեցրած մասնակցին՝ <<Կանժիլստրոյ>> ՍՊԸ-ին 25.10.2016 թ. ծանուցել, որ երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին ընկերության համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3. Բանակցային ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ա. Ջանջուղազյան)

3.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2016 թվականի հոկտեմբերի 31-ին ժամը 11:00-ին ՀՀ Քաղաքաշինության նախարարությունում ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ 448 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ Ա. Ջանջուղազյան

Անդամ՝ Ռ. Եղիազարյան

Ռ. Խոջայան

Ֆ. Սարգսյան

Ա. Աշուղյան

Քարտուղար՝ Հ. Ավետիսյան